Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 36

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2008թ. դեկտեմբերի 10-ին ժամը 16:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Արամայիս Գրիգորյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Արա Պետրոսյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Հրանտ Բեգլարյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Կարեն Զադոյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Նորայր Դանիելյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ Վիկտոր Ենգիբարյանի լիազոր ներկայացուցիչ
Արման Ոսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ
Շիրակ Միքայելյանը	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն

	մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ

Նիստին հրավիրված էր.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դավիթ Սարգսյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կառավարման խորհրդի քարտուղար
Տիգրան Քալանթարյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի ղեկավար
Արամ Ղարիբյանը	ՀՀ Վարչապետի խորհրդական
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Տիգրանուհի Բաղդասարյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. ՀՄԿ-ին ներկայացվող 10-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.

   ա/ Հատկացման հայտ և եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,
   բ/ Հատկացման նախապայմանների հաշվետվություն,
   գ/ Աշխատանքային պլան,
   դ/ Ամփոփ եռամսյակային հաշվետվություն և ցուցանիշների վերահսկման աղյուսակ,
   ե/ Գնումների կատարման հաշվետվություն և գնումների պլան
   զ/Տարեկան հաշվետվություն:

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «6 մայր ջրանցքների վերականգնում (Փաթեթ 1)» պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի վարկային ենթաբաղադրիչի երկրորդ փուլի իրականացման նպատակների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում և «Վարկային ծրագրի վարչական քաղաքականությունը և ընթացակարգերը» ուղեցույցի քննարկում և հաստատում:

4. Այլ հարցեր:

   ա/ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում «ՎԻՍՏԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից, որպես գործատու սոցիալական ապահովության վճարների մասով արտոնությունների կիրառման հարցի քննարկում:

   բ/ Երրորդ կարգի և մայր ջրանցքներում շինարարական տեխնոլոգիաների կիրառման մոտեցումների մասին ներկայացված տեղեկատվության քննարկում:

   գ/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի ֆինանսական և ծրագրային գործունեության աուդիտորական և այլ ստուգումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգին կից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կառավարման խորհրդի անդամներին ներկայացվել էր նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան տեղեկանք՝ կից փաստաթղթերով:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ 2009թ. հունվար-մարտ ամիսների համար հատկացման հայտով նախատեսվում է ստանալ ֆինանսավորում 6,811,305 (վեց միլիոն ութ հարյուր տասնմեկ հազար երեք հարյուր հինգ) ԱՄՆ դոլարի չափով, ընդ որում ընթացիկ եռամսյակի վերջի դրությամբ ծրագրի փաստացի և կանխատեսվող (դեկտեմբեր ամսվա) ծախսերի ընդհանուր գումարը կազմում է 28,081,321 (քսանութ միլիոն ութսունմեկ հազար երեք հարյուր քսանմեկ) ԱՄՆ դոլար:

Արա Հովսեփյանը նաև տեղեկացրեց, որ նախորդ եռամսյակային հատկացված հայտի հաստատումից առ այսօր բավարարվել են նախկինում չբավարարված ևս երկու կատարման նախապայման, որոնք են՝

- «Կառավարությունը մշակել և ընդունել է օրենսդրություն և/կամ այլ իրավական ակտեր, կամ փոփոխել է գործող օրենսդրական կամ այլ իրավական ակտերը, որպեսզի հեշտացնի գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը», և
- «Կառավարությունը մշակել և ընդունել է օրենսդրություն և/կամ այլ իրավական ակտեր, որպեսզի բարելավի գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալները, այդ թվում՝ ոլորտի հաշվապահական հաշվառումը և տվյալների հավաքման ընթացակարգերը»:

Միաժամանակ ներկայացվեց, որ չի բավարարվել Ջրից դեպի Շուկա բաղադրիչի հետևյալ նախապայմանը՝ «"ՋՕԸ-երի գործառնական և պահպանության ծախսերի հատուցում ջրօգտագործման վճարների հաշվին" մոնիտորինգային և գնահատման ցուցանիշի նախատեսված մակարդակը կատարվել է», որի համար ՀՄԿ-ից առաջարկվում է ստանալ նախապայմանի կատարման հետաձգում:

Արա Հովսեփյանը նշեց, որ 2008թ. համար Համաձայնագրով ՋՕԸ-երի ծախսածածկման ցուցանիշը կազմում է 55%, իսկ ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 8-ի «Ջրօգտագործող ընկերությունների պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնադրույթները և մատակարարված ոռոգման ջրի կորուստների նորմաները հաստատելու մասին» թիվ 188-Ն որոշմամբ, որում նույնպես սահմանվել է ծախսածածկման ցուցանիշը, ընդ որում վերջինս 2008թ. համար կազմում է 52.5 %: ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ունեցած ոչ պաշտոնական տվյալների համաձայն (ՀՀ տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեին ուղղված պաշտոնական հարցման պատասխանը դեռ չի ստացվել) 2007թ. փաստացի հավաքագրման հաշվին ծախսածածկման ցուցանիշը կազմել է 36.6%, որը կասկածի տակ է դնում 2008թ. համար ամրագրված ցուցանիշի կատարումը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը Անդրանիկ Անդրեասյանին խնդրեց պարզաբանել, թե արդյո՞ք ցուցանիշը բավարարվում է, թե՝ ոչ և եթե ոչ, ապա որո՞նք են դրա պատճառները:

Անդրանիկ Անդրեասյանը պարզաբանեց, որ ցուցանիշը չի բավարարվում, սակայն արդեն իսկ ՀՄԿ-ի հետ համաձայնություն կա վերանայելու և ամրագրելու առավել իրատեսական ցուցանիշներ: Տվյալ նախապայմանի չբավարարման համար առկա են մի շարք օբյեկտիվ պատճառներ: Վերանայումը կիրականացվի առաջիկա երեք ամիսների ընթացքում, որից հետո կառաջարկվի նոր, առավել իրատեսական մոտեցում:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ի՞նչն է սխալ եղել նախկին կանխատեսումներում:

Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ կանխատեսվում էր, որ ծախսերը կնվազեն, եկամուտները կավելանան: Ներկայումս հավաքագրման ցուցանիշն ավելացել է, սակայն ծախսերը չեն նվազել: Ընդ որում ծախսերի նվազման մասով առկա է խնդիր, քանի որ նախատեսված քայլերի մի մասը չի կատարվել, օրինակ Հազարամյակի մարտահրավեր ծրագրի շրջանակներում շինարարական աշխատանքների ծավալը բավականին կրճատվել է: Բացի այդ կան նաև այլ օբյեկտիվ պատճառներ, մասնավորապես՝ եկամուտները և հավաքագրման տոկոսն ավելացել են, սակայն նվազել է իրականում սպառվող ջրի քանակը, բացի այդ կանխատեսված սակագների փոխարեն կիրառվել են ավելի ցածր սակագներ:

ՀՀ Վարչապետը հայտնեց, որ համաձայն է նշված երեք պատճառների հետ:

Արամ Ղարիբյանը խնդրեց պարզաբանել, թե ի՞նչն է պատճառը, որ 2006-2007թթ. առնվազն 10 ՋՕԸ-երում ջրի ինքնարժեքը կազմում էր 9-11 դրամ, մինչդեռ 2008թ. միայն 1 ՋՕԸ կա, որտեղ ջրի ինքնարժեքը չի ավելացել:

Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ դրա համար բազմաթիվ պատճառներ կան, օրինակ՝ սղաճը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը փաստեց, որ ՀՄԿ-ի առջև ունեցած տվյալ պարտավորությունը կատարված չէ և անհարժեշտ է ներքին քննարկումներ ունենալ՝ հարցին լուծում տալու համար:

Արմեն Գևորգյանը նշեց, որ անհրաժեշտ է օբյեկտիվ լինել, օրինակ՝ նախորդ օրը 7 գյուղերի հետ կապված քննարկման ընթացքում պարզ է դարձել, որ վերջիններս վճարում են իրենց կողմից սպառված ջրի միայն 10 %-ի համար՝ հիմնավորելով, որ առկա են ստորգետնյա հարամիներ, որոնցով հեռանում է օգտագործված ջրի մեծ մասը: Սակայն ակնհայտ է մի բան. Հայաստանի Հանրապետությունում չի ձևավորվել ոռոգման ջրի համար վճարելու կուլտուրան: Առ այսօր կառավարությունն այս հարցում մեղմ քաղաքականություն է վարել, սակայն հաջորդ իսկ տարվանից այն խստացվելու է:

Կարինե Դանիելյանը նշեց, որ երբ Սևանից ջրթողի հետ կապված վեճ էր, ՀՀ կառավարությունը ջրթողը հիմնավորում էր երաշտով և նշում, որ ոռոգման ջրի պահանջարկ կա, որի տրամադրման արդյունքում ՀՀ պետական բյուջե գումար է մուտք լինում:

Արմեն Գևորգյանը հաստատեց և նշեց, որ նախորդ տարվա համեմատությամբ 2 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով հավելյալ գումար է մուտք եղել ՀՀ պետական բյուջե:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ տվյալ կատարման նախապայմանի հետ կապված ՀՄԿ-ի հետ երկու մոտեցում է քննարկվում. կամ վերանայել ցուցանիշները՝ արտացոլելու համար իրական պատկերը, կամ փոխել նախապայմանը և որպես ցուցանիշ ամրագրել հավաքագրման տոկոսը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ անհրաժեշտ է ի սկզբանե չվերցնել այնպիսի պարտավորություններ, որոնք չենք կարող կատարել:

Արմեն Գևորգյանը նշեց, որ ներկայումս քննարկվում է սուբսիդավորման վերաբերյալ առկա քաղաքականությունը փոխելու և հասցեական սուբսիդավորման անցնելու հարցը: Ընդ որում մշակվում է տեխնիկական առաջադրանքը, սակայն որոշակի անհանգստություն կա, քանի որ այս հարցն էապես կապված է ՀՄՀ-Հայաստան ծրագրի հետ և կարող է որոշակի ազդեցություն ունենալ վերջինիս վրա: Մասնավորապես՝ ՀՄՀ-Հայաստանի մասնագետները հայտնում են, որ այս հայեցակարգը ժամանակավրեպ է: Միաժամանակ, Արմեն Գևորգյանն ավելացրեց, որ անհրաժեշտ է համարում առաջարկել, որպեսզի ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի խորհրդատուն ուսումնասիրի և ներկայացնի իր դիրքորոշումն այս հայեցակարգի վերաբերյալ:

Արա Հովսեփյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի մասնագետները և խորհրդատուները քննարկել են հայեցակարգի նախագիծը ՀՀ Վարչապետի խորհրդական Արամ Ղարիբյանի և ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Սամվել Ավետիսյանի մոտ կայացած քննարկումների ժամանակ, որոնց ընթացքում նշվել է, որ հայեցակարգում ներկայացված դրույթների իրականացման արդյունքում ոլորտի քաղաքականության փոփոխությունն ուղղակի ազդեցություն կունենա ՋՕԸ-երի ֆինանսական կայունության, արդյունքում նաև ծախսածածկման մակարդակի վրա: Հաշվի առնելով այդ, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը նպատակահարմար է գտնում սուբսիդավորման համակարգի փոփոխությունը սկսել մի շարք միջոցառումների իրականացումից հետո, այն է՝ համակողմանի և անկախ փորձագիտական վերլուծության ենթարկել բոլոր սուբսիդավորվող ՋՕԸ-երի բյուջեները, ճշգրտել ՋՕԸ-երի

կողմից ոռոգվող հողատարածքները, մատակարարվող ջրի քանակները, ուժեղացնել ջրօգտագործողների դերը ՋՕԸ-երի կառավարման և վերահսկողության գործառույթներում:

Արմեն Գևորգյանը հարցրեց, թե առաջարկել է արդյո՞ք խորհրդատուն ՋՕԸ-երի զարգացման ծրագիր, թե՝ ոչ:

Անդրանիկ Անդրեասյանը նշեց, որ դա նախատեսված է եղել խորհրդատուի տեխնիկական առաջադրանքում: Ներկայումս խորհրդատուն առաջարկում է ընտրված մայր ջրանցքների շրջանում 8 ՋՕԸ-երի եւ 2 ջուր մատակարարող ընկերությունների կառավարման բարելավման նպատակով խորացված օժանդակություն ցուցաբերել և կառավարման բարելավման պլանների մեջ ամրագրված մոտեցումը կիրառել նաև մյուս 44 ՋՕԸ-երի համար:

Արմեն Գևորգյանը հարցրեց, թե ե՞րբ հայտնի կլինեն արդյունքները:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ մինչև 2009թ. ապրիլ ամիսը պատրաստ կլինի պիլոտային ծրագրի կառավարման բարելավման պլանը և, եթե արդյունքները դրական լինեն, ապա այն կկիրառվի նաև մյուս ՋՕԸ-երի համար:

Արամ Ղարիբյանը հայտնեց, որ հասցեական սուբսիդավորումը չի նշանականում ՋՕԸ-երի թուլացում: Այս դեպքում էլ շարունակվելու է մասնակցային կառավարումը և ՋՕԸ-երի կառուցվածքային ամրապնդումը: Ընդ որում Համաշխարհային բանկը կարծիք է հայտնել, որ սուբսիդավորմամբ պետությունը չի աջակցում ՋՕԸ-երի կայացմանը, իսկ հասցեական սուբսիդավորման տարբերակով լուրջ նախադրյալներ են ստեղծվում ՋՕԸ-երի զարգացման և կայացման համար:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 10-րդ Հատկացման հայտը և դրան կցվող փաստաթղթերը:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Անդրանիկ Անդրեասյանը նշեց, որ սա ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում ոռոգման ոլորտում առաջին մեծ շինարարական պայմանագիրն է և անհրաժեշտ է աշխատանքները սկսել որքան հնարավոր է շուտ:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ պայմանագիրը կկնքվի և աշխատանքները կմեկնարկեն մոտակա մեկ շաբաթվա ընթացքում:

Պարզաբանումից հետո **միաձայն որոշվեց՝** հիմք ընդունելով տիպային պայմանագրի նախագիծը՝ հաստատել պայմանագրի կնքումը համատեղ SADE (France) և ՇՄՇ-23 ԲԲԸ ընկերությունների հետ:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ այն պարագայում երբ առևտրային բանկերի միջոցով արդեն իսկ 50 մլն. հատկացվել է և ևս 50 մլն. նախատեսվում է հատկացնել վարկավորման ոլորտին, իսկ Համաշխարհային բանկն էլ պատրաստվում է տրամադրել հավելյալ 250 մլն այս նպատակի իրականացման համար, ուստի ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում առկա 7 մլն.-ը էական գումար չէ վարկավորման համար և առավել նպատակահարմար է այն ուղղել այլ ոլորտների կայացմանը:

Արա Հովսեփյանը ներկայացրեց, որ ՊՈԱԿ-ը կատարել է ուսումնասիրություն և ներկայացրել է ամփոփ տեղեկատվություն վարկային բաղադրիչի և վարկային դաշտում վերջինիս դերի

մասին և նշեց, որ այդ ուսումնասիրության համաձայն 2008թ. նոյեմբերի դրությամբ ՀՀ ֆինանսական հատվածում գործող 22 առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի միայն 7%-ն է ուղղված գյուղատնտեսության ոլորտին, իսկ 23 վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի՝ միայն 15%-ը:

Արման Ոսկանյանը հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի նախորդ նիստի ընթացքում քննարկվել է այս հարցը, և, չնայած որ ՇԽ-ն լուրջ ուսումնասիրություններ չի արել, հավանություն է տրվել վարկային բաղադրիչի շարունակմանը, քանի որ տվյալ վարկերը ցածրատոկոս են և հանդիսանում են Ջրից դեպի Շուկա բաղադրիչի տրամաբանական շարունակությունը: Ընդ որում առաջարկվում է երկրորդ փուլում շեշտը դնել ոչ թե տոկոսների, այլ մատուցվող ծառայությունների որակի վրա: Արման Ոսկանյանը կրկնեց նաև իր նախկինում արված առաջարկը, որ գումարը կարելի է տրամադրել դրամաշնորհների տեսքով և բացառել բանկերի և վարկային կազմակերպությունների մասնակցությունը:

ՀՀ Վարչապետն առաջարկեց գումարը տալ Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման աջակցության գործակալությանը, եթե այս կարգով ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում վարկավորման իրականացումը հնարավոր է:

Տիգրան Դավթյանը նշեց, որ անհրաժեշտ է համարում տվյալ գումարն օգտագործել կապիտալի ավելացման, այլ ոչ կարողությունների զարգացման ուղղությամբ:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը վարկավորման այս տարբերակը չի ուսումնասիրել:

ՀՀ Վարչապետն առաջարկեց հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին պարզելու, թե հնարավոր է արդյո՞ք այս գումարն ուղղել ՓՄՁ ԶԱԳ-ին:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ վարկավորման հետ կապված ՀՄԿ-ն ընդհանուր առմամբ անկողմնակալ է, քանի որ այս գումարները հանդիսանում են ՀՀ դրամաշնորհային միջոցներ: Սակայն ՀՄԿ-ի դիրքորոշումն է, որ ցանկացած լուծման դեպքում, այդ թվում՝ այլընտրանքային, Ջրից դեպի Շուկա բաղադրիչի նպատակները պետք է պահպանվեն և ծրագիրը պետք է հնարավորինս զերծ լինի բացասական ազդեցությունից:
Միաժամանակ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը որպես այլընտրանք առաջարկում է երրորդ կարգի ջրանցքների վերականգնման ծրագրի ծավալների ավելացում, որի նպատակահարմարության մասին ներկայացվում է առանձին տեղեկանք:

Կարեն Ջադոյանը, նշելով, որ որպես շահառուների խորհրդի անդամ իրենք հանձնարարական ունեն կամ կողմ քվեարկել վարկային ենթաբաղադրիչի շարունակմանը, կամ հետաձգել հաստատումը մինչև կառավարման խորհրդի մյուս նիստ, առաջարկեց քննարկումը շարունակել համապատասխան ուսումնասիրության արդյունքների ստացումից հետո:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը առաջարկեց կողմ քվեարկել վարկային ենթաբաղադրիչի շարունակմանը՝ ՓՄՁ ԶԱԳ-երի միջոցով:

Արա Հովսեփյանը առաջարկեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ն ուսումնասիրի և մյուս նիստին ներկայացնի տեղեկանք, թե արդյո՞ք հնարավոր է, և եթե այո, ապա ի՞նչ կարգով է հնարավոր իրականացնել վարկավորումը՝ ՓՄՁ ԶԱԳ-ի միջոցով:

ՀՀ Վարչապետը առաջարկեց հարցը քննարկել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի հետ և առաջարկել համատեղ լուծում:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** ուսումնասիրել վարկային ենթաբաղադրիչի երկրորդ փուլի իրականացման հնարավորությունը ՓՄՁ ԶԱԳ-ի միջոցով և հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԿԱ-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ քննարկել և

մեկշաբաթյա ժամկետում ՀՀ Վարչապետին ներկայացնել վերջինիս իրականացման հնարավոր մեխանիզմները:

Օրակարգի 4-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Միաձայն որոշվեց՝ հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ ուսումնասիրել արտոնության կիրառման և վարչարարության ապահովման հնարավորության հարցը և հնարավորության դեպքում հարցին տալ դրական լուծում:

Օրակարգի 4-րդ հարցի բ/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը ներկայացրեց, որ երրորդ կարգի նախնական նախագծերի քննարկման փուլում, նախագծող կազմակերպության կողմից առաջարկված տեխնիկական լուծումները տարաձայնություն են առաջացրել ՀՄԿ-ի տեխնիկական խորհրդատու «Ջեյկոբս» (Մեծ Բրիտանիա) ընկերության փորձագետների մոտ, ինչը պարզաբանվում է ներկայացված տեղեկանքում:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ ՀՀ տեղացի մասնագետները պնդում են, որ անհրաժեշտ է ֆունդամենտալ վերանորոգում կատարել, մինչդեռ նրանց ամերիկացի գործընկերները փաստում են, որ դա չափազանց թանկ է և ֆինանսապես արդարացված չէ:

Արամայիս Գրիգորյանը նշեց, որ տեղացի մասնագետները ճիշտ են, քանի որ դա տալիս է երկարատև արդյունք, մինդեռ հակառակ պարագայում ամբողջ ոռոգման համկարգը մի քանի տարի հետո նորից կգա անպիտան վիճակի:

Արա Հովսեփյանը ավելացրեց, որ երրորդ կարգի ջրանցքների վերականգնման համար նախատեսվում է համայնքների կողմից 15 % համաֆինանսավորում: Ընդ որում յուրաքանչյուր համայնք գիտի թե կոնկրետ որ հատվածն է ուզում հիմնանորոգել՝ բետոնապատել, որպես կանոն դա գլխամասային հատվածն է, մինչդեռ ՀՄԿ-ի մասնագետները պնդում են, որ դա չի լուծի ջրանցքի ստորին հատվածում ոռոգման խնդիրը, իսկ իրենց կողմից առաջարկվող տեխնոլոգիաներն ավելի մատչելի են, որն էլ թուլ կտա ավելի մեծ քանակությամբ ջրանցք վերականգնել՝ ապահովելով ամբողջական ոռոգում: Ներկայումս ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը ձեռնամուխ է լինում 6 մայր ջրանցքների առաջին պիլոտային ծրագրի իրականացմանը, որի ընթացքում կիրառվելու են նոր առաջարկված տեխնոլոգիաները:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե որքա՞ն ժամանակից պարզ կդառնան պիլոտային ծրագրի արդյունքները:

Տիգրան Քալանթարյանը հայտնեց, որ ըստ էության ջրանցքը պետք է շահագործման մեկ սեզոն անցնի արդյունքներն ի հայտ գալու համար, սակայն տվյալ դեպքում ՀՄԿ-ի հիմնական նպատակն է պարզել, թե այդ տեխնոլոգիաները հայաստանյան պայմաններում ընդհանրապես կիրառելի են, թե՝ ոչ:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց, որպեսզի մյուս նիստին և՛ տեղացի և՛ ՀՄԿ մասնագետները գան և ներկայացնեն իրենց տեսակետներն ու հիմնավորումները:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին պարբերաբար կառավարման խորհրդին տեղեկատվություն ներկայացնել շինարարական աշխատանքի ընթացքի և արդյունքների մասին:

Օրակարգի 4-րդ հարցի գ/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետն առաջարկեց շահառուների խորհրդի անդամներին ծանոթանալ ներկայացված տեղեկանքին և, անհրաժեշտության պարագայում, քննարկել այն ՊՈԱԿ-ի հետ:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** ի գիտություն ընդունել ներկայացված տեղեկատվությունը:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱՁԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը